**ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **պ. գ. թ.դոց. Ա. Յ. Բալյան**

Իսկականի հետ ճիշտ է՝ **պ. գ. թ.դոց. Ա. Յ. Բալյան**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2015թ. **սեպտեմբերի 4-ի** նիստի

**Ներկա էին՝ պ.գ.թ., դոց. Անուշավան եպս. Ժամկոչյան** (խորհրդի նախագահ), **դոցենտ Ա. Յ. Բալյան** (խորհրդի քարտուղար), դոցենտ **Ա. Է. Հովհաննիսյան,** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ **Ռ. Հ. Վարդանյան,** գիտ. դոկտ., պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Հ. Գ. Ավետիսյան,** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Լ. Ա. Սարգսյան,** ասիստենտ Վ.Վ. Խաչատրյան, փ.գ.թ. դոց. **Պ. Բարսեղյան,** պ.գ.դ. **Ս. Ս. Մկրտչյան**, Հայ եկեղ. պատմ և եկեղեց. ամբ. պատմ. գիտ. դոկտ. Ա. Ս. Սահակյան, փ.գ.թ. դոց. Գ. Ա. Սարգսյան, դսխ. **Գ. Հ. Ղուշչյան, ՈՒԽ Նախագահ Ն. Հայրապետյան, ՈՒԳԸ նախագահ Ս. Մելքոնյան:**

*ՕՐԱԿԱՐԳ*

1. Անվանական կրթաթոշակներ տրամադրելու երաշխավորության հարցը:
2. **ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանության» ամբիոնի պրոֆեսոր, Ռաֆիկ Հովակիմի Վարդանյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու հարցը՝ ԵՊՀ գիտխորհրդին միջնորդելու մասին**
3. ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանության» ամբիոնի «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմության» գիտական թեմայի երաշխավորության և հաստատման հարցը

ԼՍԵՑԻՆ.1 - Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Նազելի Արամի Հայրապետյանին 2015-16 ուստարվա 1-ին

կիսամյակից Գրիգոր Լուսավորիչի անվանական կրթաթոշակ տրամադրելու երաշխավորության հարցը (զեկ.՝ դոց.. Ա. Բալյան):

Զեկուցողը նշեց, որ Նազելի Արամի Հայրապետյանին ունի բարձր առաջադիմություն, վերջին կիսամյակների ընթացքում եղել է բացարձակ գերազանցիկ, իրեն դրսևորել է իբրև պարտաճանաչ, կազմակերպչական ընդունակություններով օժտված անձնավորություն: Վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և համակուրսեցիների վստահությունն ու սերը և արժանի է ստանալու անվանական կրթաթոշակ: Նա Աստվածաբանության Ֆակուլտետի ՈՒԽ-նախագահն է, հանդիսանում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ և մասնակցել է մի շարք միջհամալսարանական գիտաժողովների և մրցույթների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - պ. գ. թ. դոց. Անուշավան եպս. Ժամկոչյան, պրոֆ. Ռ. Վարդանյան, դոց. Ա. Բալյան:

ՈՐՈՇԵՑԻՆ– Երաշխավորել Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Նազելի Արամի Հայրապետյանին 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակից Գրիգոր Լուսավորիչի անվանական կրթաթոշակ տրամադրելու համար:

ԼՍԵՑԻՆ - Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրաի 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Հայրոյի Մարիկյանին 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակում Վազգեն Ա կաթողիկոսի անվանական կրթաթոշակ ստանալու երաշխավորության հարցը (զեկ.՝ դոց. Ա. Բալյան):

Զեկուցողը նշեց, որ ունի բարձր առաջադիմություն, վերջին կիսամյակում բացարձակ գերազանցիկ է և արժանի է ստանալու անվանական կրթաթոշակ: Ֆակուլտետի ՈՒԽ խորհրդի անդամ է: Մասնակցել է մի շարք միջհամալսարանական գիտաժողովների և մրցույթների: Պարտաճանաչ է կազմակերպչական ընդունակություններով օժտված անձնավորություն և վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և համակուրսեցիների վստահությունն ու սերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Անուշավան եպս. Ժամկոչյան, պրոֆ. Ռ. Վարդանյան,, դոց. Ա. Բալյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.– Երաշխավորել Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրաի 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Հայրոյի Մարիկյանին 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակում Վազգեն Ա կաթողիկոսի անվանական կրթաթոշակ ստանալու համար:

ԼՍԵՑԻՆ. - Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Սիմոնի Ասատրյանին 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակից Գրիգոր Լուսավորիչի անվանական կրթաթոշակ տրամադրելու երաշխավորության հարցը (զեկ.՝ դոց.. Ա. Բալյան):

Զեկուցողը նշեց, որ Անահիտ Սիմոնի Ասատրյան ունի բարձր առաջադիմություն, վերջին 5 տարիների ընթացքում եղել է բացարձակ գերազանցիկ, իրեն դրսևորել է իբրև պարտաճանաչ, կազմակերպչական ընդունակություններով օժտված անձնավորություն: Վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և համակուրսեցիների վստահությունն ու սերը և արժանի է ստանալու անվանական կրթաթոշակ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - պ. գ. թ. դոց. Անուշավան եպս. Ժամկոչյան, պրոֆ. Ռ. Վարդանյան, դոց. Ա. Բալյան:

ՈՐՈՇԵՑԻՆ– Երաշխավորել Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Անահիտ Սիմոնի Ասատրյանին 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակից Գրիգոր Լուսավորիչի անվանական կրթաթոշակ տրամադրելու համար:

**ԼՍԵՑԻՆ.2 –ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանության» ամբիոնի պրոֆեսոր, Ռաֆիկ Հովակիմի Վարդանյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու հարցը՝ ԵՊՀ գիտխորհրդին միջնորդելու մասին (զեկ.՝ Ա. Բալյան):**

**Զեկուցողը նշեց, որ պրոֆեսոր, Ռաֆիկ Հովակիմի Վարդանյանը երկար տարիներ ղեկավարել է Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանության» ամբիոնը, իրականացրել է բեղուն գիտա-**

**մանկավարժական գործունեություն, հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների և վայելում է ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի և ուսանողության բարձր գնահատանքն ու սերը:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- պ. գ. թ. դոց., Տ. Անուշավան եպս. Ժամկոչյան, պ. գ. դ., պրոֆ. Լ. Ա. Սարգսյանը, պ. գ. դ. պրոֆ. Ս. Ս. Մկրտչյանը, պ.գ.թ, դոց., Ա. Է. Հովհաննիսյան:**

**ՈՐՈՇԵՑԻՆ.- Միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանության» ամբիոնի պրոֆեսոր, Ռաֆիկ Հովակիմի Վարդանյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու համար:**

ԼՍԵՑԻՆ 3 ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանության» ամբիոնի «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմության» գիտական թեմայի երաշխավորության և հաստատման հարցը (զեկ.՝ Ա. Հովհաննիսյան):

Զեկուցողը խորհրդի նիստի քննարկմանը ներկայացրեց «Աստվածաբանության» ամբիոնի «Դրվագներ հայաստվածաբանական մտքի պատմության» գիտական թեման և նշեց, որ այն գիտական մեծ արժեք է ներկայացնում, ինչպես պատմական, այնպես էլ տեսական, արդիական և կիրառական տեսանկյուններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պատմ. գիտ. թեկն. դոց. Ա. Եպս. Ժամտոչյան, պատմ. գիտ. դոկտ. պրոֆ. Լ. Ա. Սարգսյան, պատմ. գիտ. դոկ. Ս. Մկրտչյան, պատմ. գիտ. թեկն. դոց. Ա. Հովհաննիսյան, պատմ. գիտ. թեկն.դոց. Ա. Բալյան:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Աստվածաբանության» ամբիոնի «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմության» գիտական թեման և երաշխավորել ՀՀ ԿԳՆ Գիտության Պետական Կոմիտեին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ պ.գ.թ. դոց. ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊՍ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ պ.գ.թ. Ա. ԲԱԼՅԱՆ